Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Մաթեմատիկա>> (8 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3/4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթղթեր

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 8-ից մինչեւ նոյեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 23-ին ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 20-72-37 հեռախոսահամարով: